


Ավարսվեց «Մեակույթ» ծրագիրը, սկսվում են մեակույթային ծրագրերը...

Նկատելի է, որ այս օրերին հազարավոր մարդիկ մտնում են թանգարաններ, թատրոններ, մեակույթային այլե-այլ օջախներ ու, առաջին հերթին, ներկայացման ծրագրերը կամ ուղեցույց-կատարումները թերթերում, մեակույթի ակա-նավոր գործիչների մեծադիր լուսանկարները կամ նրանց կատարումները դիտելու փոխարեն, նախ զննում են շուրջընդհարում, հետո, որդես կա-նոն, նայում են առաստաղին, արդա՝ հասակին եւ նոր միայն «մե-նում» հանդիսատեսի «դերի մեջ»...



Լուսանկարը Դայր Թաթևյանի

կան, Մ. Սկրչյանի անվան արհեստական, Գ. Պարոնյանի անվան երաժշտական կոմպոզիտի, Գ. Թումանյանի անվան սիմֆոնիկային եւ դասանի հանդիսատեսի թատրոնները, Գայասանի ազգային դաս-կերատեսի, դասնության, ժողովրդական եւ արդի արվեստների թան-գարանները: Ջաջուտում՝ Միմասի, Գյումրիում՝ Ասլամազյանների, Զիթողյան, Մերկուրովի, Երեանում՝ Քոչարի, Սարգսի, Գարեգինի, Թումանյանի, Փարազանովի տուն-թանգարանները, Վանաձորում՝ Երկրաբանական թանգարանի հոյակերտ դալարը...

Ամբողջովին փոխվել են այդ օջախների ձայնալուսային, էլե-



կցարյուսավորման, հակահրդեհային սարքավորումները, արդիակա-նացվել բեմական մեխանիզմները, օդափոխության, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը: Լուծվել են շինարարական ջեռուց-ման հարցերը, եւ մեակույթային օջախների 7 նուսաները այլեւ «ուճ-ն են մեջ»:

Ահա թե ինչու այսօր եւ, համոզված ենք, դեռ երկար ժամանակ, մարդիկ մտնելով մեակույթային հաստատություններ՝ առաջին հերթին զննելու են քաղաքային ու երաժշտագիտության խոր զգացումով եւ համակվելու մեծ բարեբա Զորք Զորքոյանի նկատմամբ, շնորհակա-լությամբ են հիշելու շինարարների ջանադիր աշխատանքը:

Ավարսվեց «Մեակույթ» ծրագիրը, սկսվում են մեակույթային ծրագրերը:

Սամվել Խալաթյան

Այդ անսովոր վարի դասձառը «Լինսի» հիմնադրամի «Մեա-կույթ» ծրագիրն է, ավելի ճիշտ՝ այդ ծրագրի հաջող ավարտը:

«Տրամադրված 18 միլիոն դոլարով հսկայածավալ աշխատանք կատարեցին», - գոհունակությամբ նշում է «Մեակույթ» ԾԻԳ ՊՅ ՏՆՕ-րեն Գ. Սկրչյանը: - Փաստորեն վերածնվեց բուրջ կեն դար չվերա-նորոգված մեակույթային 35 օջախ: Դրանցից 24-ը մայրաքաղաքում, 11-ը Կոստայում, Արմավիրում, Լոռիում, Շիրակում»:

Տնօրենի գոհունակությունը տեղին է: 27 կադավառու եւ ավելի քան 75 ենթակադավառու կազմակերպությունների եւ բուրջ 8 հազար շինվերանորոգումների նվիրումով լի աշխատանքով արդեն նորովի եւ էլ ավելի բարեկենս են դառնում Օդեսայի եւ բալթի, Գ. Սուրդուկյա-նի անվան ակադեմիական, Գ. Ղափլանյանի անվան դրամատիկա-



Դիվարը Բասրեկյանի արվեստին առաջին անգամ ծանոթացա, երբ փորը էի: Հայրս երեկոները մեզ համար կարդում էր Հովհ. Թումանյանի «Թմկա-րերդի առումը», Ս. Սանդաղյանի «Մխիթար սպարապետը», Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»: Հայրս կարդում էր, իսկ ես անհազ հետաքրքրություններով նայում էի դրքի նկարագրողումնե-րին, ավելի ճիշտ ոչ թե նայում, այլ աչքերով կանոնում եւ մտովի տեսնում էի հորս ընթերցածը: Հետո ինձ տարան պատկերաս-րահ, որտեղ ես կարկամեցի Բասրեկյանի մեծակտավ ստեղծա-գործությունների առջև: Հետո արդեն մասնագիտական աչ-քով սկսեցի նայել, կարդալ, ուսումնասիրել: Արդեն տպավորու-թյունից անցում կատարվեց հաստատ կարծիքի, թեև մեկը մյուսին երբևէ չխանգարեց ու չհակասեց, ու թեև ես այժմ էլ

բիշ, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի, Սր. Մեա-րոպ Մաչատրի չքանչանակիր:

Մրանք պաշտոնական հակիրճ տեղեկություններ էին: Իսկ իրականում Բասրեկյանն ամեն օր ապրում է արվեստով, իր ժո-ղովրդի ուրախություններում, հարազատ քաղաքի հոգսերով, նույնիսկ չնչին թվացող լավ ու վատով: 90-ամյա նկարիչը սիրով է բացում դուռը, ու երբ թակոցը մուրացկան է, ստատորեն կերակրում, հետո դրամ ու մթերք է դնում, իսկ ճա-նապարհելուց հետո իսկույն կնճռոտվում է այդ առյուծը եւ թարուն սրբում արցունքները: Ժամերով նստում եւ ուղիտ-թատրոն է լսում, ապրում է ամեն ձայնի, ամեն արարի հետ: Միշտ Ջարենցն է կողքին, Սայաթ-Նովան, Թումանյանը: Ցա-վում է, երբ ուսանողներն անտարբեր են եւ հարցեր չիչ են տա-լիս, ուրախանում, երբ ինչ-որ երիտասարդ նկարիչ հաջողու-

90-ամյա մեր վարդեսը

պահանջվել է վաղեմի տպավորությունը:

Նույնքան անմոտանալի է այն օրը, երբ առաջին անգամ եղա վարպետի արվեստանոցում: Գիտեի, որ պետք է լինեմ այնտեղ եւ ողջ օրն անհանգիստ էի: Չգիտեմ շատ արևուտ օր էր, թե իսկապես մի առանձնակի լուսավորություն կար այն-տեղ: Այդ առեղծվածային լուսավորությունն մեջ փայտյա, բար-ձր թիվնակով բաղկաթողին նստած էր փառահեղ ծերունին, ասես մի իշխան: Ակամա մտրումս վեր հատնեց Սանդաղյանի Դավիթ-Բեկը, առհասարակ մեր մեծերը... Հպարտ կեցվածքը, խիտ ու գանգուր արծաթյա մազերն ու մորուքը աղմուկային եւ գտարդուն հայի պատկերավոր կերպար էր: Իսկ լուսն սրահ-ներում զեղարվեստի մի ողջ աշխարհ՝ բնանկարներ, դիման-կարներ, տարբեր տեսարաններ: Այդ օրը ես անձամբ ծանոթա-ցա էղվարդ Բասրեկյանի հետ, ճանաչեցի նրան տանը որպես տանտիրոջ: Չէի կարող ենթադրել, որ այդ լուսավոր աշխար-հում հաճախ եմ լինելու, ուր վայելելու եմ վարպետի ընկերակ-ցությունը, լսելու նրա զրույցները, խորհուրդները, որ ուզածս ժամանակ տեսնելու եմ արվեստի այդ գործերը:

Շատ է ասվել ու գրվել էղ. Բասրեկյան արվեստագետի մասին, բայց հարկ է խոսել նաև Բասրեկյան մարդու, քաղա-քացու մասին: Համոզված եմ, որ բնածին տաղանդ ունենալը բավական չէ բարձր եւ ազնիվ արվեստ ստեղծելու համար, որ արվեստագետի խառնվածքը, սիրտն ու հոգին են մասնագետ ձևերի հետ վրձնում ու արարում: Ահա նման միաձուլում է էղ. Բասրեկյանի կյանքն ու արվեստը:

Մտվել է 1914-ին Իզդիր քաղաքում: Հետո տեղափոխվել են Երևան: Մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի Գեղարդ տեխնիկումում, այնուհետև Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում: Հայրենականի տարիներին եղել է ուղղմանա-կատում, 20 տարի տնօրինել է Հայաստանի ազգային պատկե-րասրահը, մոտ 60 տարի զբաղվում է մանկավարժական գոր-ծունեությամբ՝ սկզբում Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվես-տի ուսումնարանում, այնուհետև գեղարվեստի ակադեմիա-յում: Արվեստի վաստակավոր գործիչ է, ժողովրդական նկա-





«Ավարայրի ճակատամարտը», 1983 թ.

թյուն է ունենում: Ամանորի նախօրեին բնավ չի ուրախանում այդ կենսախինդ մարդը, այդ շարժվող հրարուխը մոայլվում է: Դիմել էին, որպեսզի չնորհավորի ժողովրդին, իսկ նա ասում էր, որ ամաչում է մարդկանց դարձյալ Համբերություն ցանկանալ, իսկ բոլորին օգնել, ցավոք, չի կարող: Հաճույքով երաժշտություն է լսում և մեկնարանում, կարծիք հայտնում հայ և արտասահմանյան գրականության մասին և շատ է ախոսում, որ տեսողության խնդիրների պատճառով այլևս չի կարողում, (ու չի նկարում):

Բայց իզգիբցու անհանգիստ էությունը նա աշխատում է՝ գրում է: Տարիներ առաջ լույս տեսավ էդ. Իսարեկյանի «Թղթի» վեպը, զարմանահարա մի բան: Կարդում ես և թվում է, թե առաջին անգամ կարդացածդ վաղուց գիտեիր, թվում է, թե գրվածը տեսնում ես, լեզուն այնքան դիպուկ է, հասկանալի, պատմածը՝ հոգեհարազատ: Իսկ ընդհանուր առմամբ գրում է այնպես, ինչպես նկարում է. չկա ոչ մի արհեստական բան, առանց ինչ-ինչ բաներ գեղեցկացնելու ձգտումի, միևնույն ժամանակ ուրիշի, աշխույժ, ինչպես իր կտավները: Վարպետի արվեստանոցում այժմ կանգնած է մի մեծ կտավ, որտեղ Արարատի և եկեղեցու ֆոնին պատկերված են մեծ իզգիբցիները: Աշխատանքն անավարտ է, բայց այդ գեմբերը շարունակ գրուցում են չփարատվող կարտի մորմոր սրտում նկարչի հետ:

Ինչ է հայրենասիրությունը, հարց, որին, թերևս, միանշանակ և կոնկրետ պատասխաններ չատ դժվար է: Բայց հարցի պատասխանը հենց Իսարեկյանի կյանքն ու գործունեությունն է: Պատկերասրահի տնօրեն եղած ժամանակ նա համայնք թանգարանի հավաքածուն, մեծացրեց և ընդգրկուն դարձրեց մշտական ցուցադրությունը, ստեղծեց նոր գիտական բաժիններ, որոնք զբաղվելու էին ուսումնասիրությունը և ֆոնդերի գիտական մշակմամբ: Հերոսարար (այդ, խորհրդային տարիներին դա հերոսություն էր) պայքարեց, որպեսզի շարունակվեր պատկերասրահի շինքի կասեցված շինարարությունը: Կազմվեց հստակ ստեղծագործական խումբ, որը չափազանց և ընդօրինակեց միջնադարյան շատ որմնակարներ, որի շնորհիվ պատկերասրահն ունեցավ որմնակարչության փառահեղ ցուցադրություն: Իսարեկյանի օրոք Հայաստանի մարդերում բացվեցին պատկերասրահի մասնաճյուղերը: Ահա՛ հայրենասիրությունը:

Վարպետի «Պատասխան Հազկերտին» հայտնի ստեղծա-

գործությունը անկտրում պայքար է ամեն տեսակ ոտնձգություն դեմ, պատասխան է յուրաքանչյուր հազկերտի: Այս հայրենասիրական թեման կատարված է այնքան համոզիչ կոմպոզիցիայի և գույների այնպիսի կառուցվածքով, որ, թվում է, այդ կերպ չէր էլ կարող լինել, կարծես հենց այդպիսին էր միջնորդը V դարում, երբ աշխարհակալ Տիրգրոնին բռունցքով էր պատասխանում հայր:

«Պատանի Դավիթը» կտավում էպիկական Հայաստանն է, անազարտ ու վեհ հայոց լեռները, ձորերը և եկեղեցին: Դավիթի նման խրոխտ է լեռնաշխարհը ու անհնազանդ օտարին: Ս. Արուսյանը Արարատի բարձունքներին՝ հայության երկու պատվարներ Արարատն ու դարձությունը, Տերյանը՝ տիեզերական կապույտի վրա հայի մեղեդային պոեզիան: Հոր և մոր ղեկավարական դիմանկարներում՝ որդիական սեր ու հարգանք...

Իսարեկյանի նույնիսկ բնանկարներում ընթերցվում է կոթողայնությունը, պատկերված ծառերն ասես հուշարձաններ լինեն, անգամ քարերից բուսած փշատենին ուժ և ամրություն է պարունակում:

Տարիներ առաջ «Գրական թերթում» լույս տեսավ էդ. Իսարեկյանի հոդվածը նվիրված կապուտաչյա Սևանին: «Ազգ»-ում տպագրեց «Գոտի» հոդվածը, որտեղ արձարծում էր աղետի գոտի և վերականգնման գոտի կոչված դարդն ու ցավը, ուղիներ մատնանշում: «Նորք»-ում տպագրվեց նրա մասին հոդվածը Ալեքսանդր Բաժրեուկ-Մելիքյանի մասին, որտեղ, ի դեպ, համեստորեն թարգրել էր այն գեղեցիկ պահը, որ Բաժրեուկի սենյակում հայտնված վերջին ծագկեփունջ նվիրողն ինքն է եղել:

Վարպետը մտահոգ է բնապահպանական հարցերով, զբաղվում է քաղաքաշինական և ճարտարապետության խնդիրներով, հայոց լեզվի և թարգմանության, Եվրասիայի հայաստան հարցերով: Գրում է Կոջոյանի, Սարյանի, Ռաչմաշյանի մասին: Ոչ մի հարցում անտարբեր չէ, որովհետև երկիրն իրենն է համարում, երկրի թանգարանները, թատրոնները, գործարանները...

Իսկ ինչպիսի՞ն է Իսարեկյանն Աշտարակում, որտեղից իր Իզգիբի անմար կարտուն է առնում: Այստեղ վարպետը նահապետ է, հայ մշակ, որը գրուցում է ամեն քարի ու թվի հետ, հրձվում մանկան պես: Նույնիսկ ձմռանը Երևանում հետաքրքր-

վում է, թե ձյունը Արայի լեռան փեշերից վեր է քաշվել թե ոչ:

Հայտնի է էդ. Իսարեկյանի պահանջկոտությունը ժամանակակից արվեստի նկատմամբ, արստրակտ նկարչության վերարթող հարցերում: Թվում է, թե Կուրբե մեծարող ռեալիստն առհասարակ մերժում է ժամանակակից միտումը կերպարվեստում: Ոչ, իհարկե այդպես չէ: Ափսոս քչերին են հայտնի Իսարեկյանի վերջին փյունաստերով արված աշխատանքները: Հիացնող են գծերի ուրիշի և հավասարակշիռ խաղը, շարժումն ու ծավալը, սրամազրությունը: Համոզված եմ, որ յուրաքանչյուր ժամանակակից արվեստի թանգարան կզարգարվի այս ստեղծագործություններով:

Պոետիկ է վարպետի ներաշխարհը: Նրա գրած բանաստեղծությունները, քառյակները նման են միջնադարյան տաղերին, մեր գուսանական արվեստին: Զարմանալի չէ, որ մեկ մարդու մեջ այսքան կարողություն է կուտակված: Զարմանալի չէ, որովհետև Իսարեկյանը դեռևս պատանի հասակից է ապրել արվեստով, մտովի խոսել աշխարհի մեծերի հետ, մեծարել Ռուբենյանին, Դելյակրուային, Շերսպիրին և այլոց: Զարմանալի այն է, որ անհատնում է մեծ արվեստարանի ջիղն ու եռանդը:

Այսօրվա շատ հայտնի նկարիչներ աշակերտել են Իսարեկյանին: Նկարիչների միության համագործակցության նա մասնակցում է ոչ որպես կազմակերպության անդամ, այլ «եռում» է:

«Թղթի» հայրենակցական միության պատվավոր նախագահն է: Մեծավաստակ արվեստարանին կոչումներն ու տի-

տղոսները չեն զրաղեցնում: Ավելորդ պերճանքի համար չէ, որ Իսարեկյանը ստանձնեց այս կոչումը և ս: Գա նրա անընդհարկուն հայրենասիրությունն է, իր ժողովրդին էլի ինչ-որ բանով ծառայելու ձգտումը, օգտակար լինելու ցանկությունը:

Երբ նոր էր սկսում իր ճանապարհը, իսկապես հեշտ չէր երիտասարդ նկարչի համար: Արվեստի պատմությունում արդեն գրանցված էին այնպիսի անուններ, որոնք մեծություններ էին. Բաշինջաղյան, Սուրենյանց, Թերթեմյանց, Սարյան և այլք: Կարծես ամեն ինչ արդեն ասված էր, բայց եթե տաղանդը բնածին է, ձեռքը մասնագիտացած, իսկ հոգին անդադար փնտրտուրի մեջ, ապա կրկնվելու վտանգ չկա: Եվ Իսարեկյանը գտավ իր ուրույն տեղը, առանձնացավ իր «ձեռագրով», շարունակեց ավագների գործը ու հայ կերպարվեստում կայացավ որպես շինարար, կենդանի դասական:

Իսարեկյանին ճանաչողները նրան կոչում են վերջին մոհիկան: Բայց ինքը՝ վարպետը ներողամտորեն ժպտում է և այնքան էլ համաձայն չէ: Նա հավատում է, որ շարունակողներ կան և անպայման կլինեն, որ հնարավոր չէ, որ ստեղծագործ ջիղը պարալիզի: Հավատում է...

Այս տարի լրանում է վարպետի 90-ամյակը: Ցանկանանք քաջ առողջություն և անհատնում այլույն մեծ հայրողուն: Ծնորհավորներ և խոնարհվեք հայ ժողովրդի երախտավորի ստջև:

ԱՐՄԵՆ ԳԱՄՊԱՐՅԱՆ
Ազգային դասկերտարանի գիտախոսող

«Պատանի Դավիթը», 1956 թ.

